



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 սեպտեմբերի 2022 թվականի N 1488-Ա

ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ, ԳՈՒՅՔ ՀԵՏ ՎԵՐՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՆՏԱՌԱՅԻՆ ԿՈՄԻՏԵԻՆ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՆՏԱՌԱՅԻՆ ԿՈՄԻՏԵԻ «ՀԱՅԱՆՏԱՌ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ (ԱՆԺԱՄԿԵՏ) ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածով, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ և 7-րդ մասերով և «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Որպես նվիրատվություն Հայաստանի Հանրապետությանը՝ Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության անտառային կոմիտեի «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպությունից (այսուհետ՝ կազմակերպություն) ընդունել կազմակերպությանը սեփականության իրավունքով

պատկանող «Toyota LC 150 4.0 GAS» մակնիշի, 25700000,00 դրամ սկզբնական և 17277834,00 դրամ հաշվեկշռային արժեքով (թողարկման տարեթիվը՝ 2018 թվական, նույնականացման համարը՝ JTEBU3FJ405084580, պետհամարանիշը՝ 567SS60) ավտոմեքենան և ամրացնել Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարությանը:

2. Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարությանն ամրացված «Toyota LC 200 4.7 GAS» մակնիշի, 1111111,00 դրամ սկզբնական և 6372306,00 դրամ հաշվեկշռային արժեքով (թողարկման տարեթիվը՝ 2008 թվական, նույնականացման համարը՝ JTMHT05J004018017, պետհամարանիշը՝ 106LL60) ավտոմեքենան հետ վերցնել և ամրացնել Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության անտառային կոմիտեին:

3. Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարությանն ամրացված «Nissan Patrol 4.2 TD» մակնիշի, 20836900,00 դրամ սկզբնական և 11237788,00 դրամ հաշվեկշռային արժեքով (թողարկման տարեթիվը՝ 2014 թվական, նույնականացման համարը՝ JN1TCSY61Z0587813, պետհամարանիշը՝ 992AX61) և «Toyota LC 70 4.5 TD» մակնիշի, 20254920,00 դրամ սկզբնական և 12675301,00 դրամ հաշվեկշռային արժեքով (թողարկման տարեթիվը՝ 2017 թվական, նույնականացման համարը՝ JTEEV73J6H0013086, պետհամարանիշը՝ 540CF61) ավտոմեքենաներն անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել կազմակերպությանը:

4. Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝

1) մեկամսյա ժամկետում ապահովել սույն որոշման 1-ին կետում նշված գույքի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով նվիրատվության պայմանագրի կնքումը, 3-րդ կետում նշված գույքի անհատույց օգտագործման պայմանագրի կնքումը և սույն որոշման 1-ին, 2-րդ և 3-րդ կետերից բխող գույքի հանձնման-ընդունման աշխատանքների կատարումը.

2) սույն կետի 1-ին ենթակետում նշված աշխատանքների ավարտից հետո մեկամսյա ժամկետում ապահովել սույն որոշման 1-ին, 2-րդ և 3-րդ կետերում նշված գույքի պետական գրանցումը և հաշվառումը.

3) սույն կետի 1-ին և 2-րդ ենթակետերում նշված աշխատանքների կատարման հետ կապված ծախսերն իրականացնել կազմակերպության միջոցների հաշվին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան